

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԺԹ. ՏԱՐԻ 2005

«ՆՈՐԱԳԻՏ ԳԻՐԳ ՄՆԱՑՈՐԴԱՑ»-Ի ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆ ՆԵՐԸ

Լաւրենտի Յովհաննիսեան

1896 թ. պրոֆ. Խալաթեանցը էջմիածնի ձեռագրատանը յայտնաբերում է «Գիրք մնացորդաց»-ի մի ձեռագիր, որը հապէս տարբերում էր յայտնի բոլոր ձեռագրերից ու հրատարակութիւններից: Համեմատելով Երուսաղէմում գտնուող համանման մի այլ ձեռագրի հետ՝ պրոֆ. Խալաթեանցը 1899 թ. հրատարակում է այն: Վերջինս բանասիրութեանը յայտնի է «Նորագիւտ գիրք մնացորդաց» անուանումով¹: Գիրքը լայն արձագանգ է գտնում գիտական շրջանակներում. թէեւ ուսումնասիրողներին առաջին հերթին հետաքրքրում էր գրքի հետ առնչուող աստուածաշնչագիտական, բանասիրական խնդիրները, սակայն մակերեսորէն շօշափուում էին նաեւ լեզուական հարցեր²:

Պրոֆ. Խալաթեանցը գրքի առաջաբանում գրում է. «Մեր նորագիւտ թարգմանութիւնը ամենայն հաւանականութեամբ հայերէն լեզուի ամենահին, թէ՛ չասենք՝ անդրանիկ գրուածքներից մէկն է ընդունելու, որ հասել է մեր ձեռքը»: Խալաթեանցը ենթադրում է, որ այն ասորերէնից կատարուած թարգմանութիւն է եւ նկատուում է բառարաններում չարձանագրուած մի քանի բառեր:

Նշուած գիրքը անգնահատելի սկզբնաղբիւր է հին հայերէնի լեզուական մի շարք իրողութիւնների բացայայտման տեսակէտից: Նրա արժէքը պայմանաւորուած է հետեւեալ հանգամանքներով.

ա) «Նորագիւտ մնացորդացը» հայ գրաւոր խօսքի առաջին վկայութիւններից է.

բ) Թարգմանուած լինելով ասորերէնից ու բաղդատուած չլինելով յունարէն բնագրի հետ՝ գիրքը կաշկանդուած չէ յունարէնի կաղապարներով, նաեւ լեզուն «գրականացնելու» ձգտումով, ուստի մեծապէս կրում է ժողովրդական մտածողութեան, խօսակցական լեզուի կնիքը՝ բառապաշարային, քերականական այնպիսի իրողութիւնների արտայայտմամբ, որոնք չկան կամ հազուադէպ են դասական մատենագրութեան մէջ».

գ) Գիրքը նաեւ գրաբարի բառարանագրութեան համար կարեւոր սկզբնաղբիւր է:

«Նորագիւտ գիրք մնացորդացը», թարգմանուած լինելով 5-րդ դարի առաջին կէսին, շրջանցելով տեքստը «գրականացնելու» ճանապարհը, չկաղապարուելով յունարէն բնագրի հետ համեմատու-

Թեան պարտադրանքով, ներկայանում է լեզուաքերականական մի շարք ուշագրաւ երեւոյթներով:

Ա. ՆՈՐԱՅԱՅՏ ԲԱՌԵՐ

Այս կարգի բառերի քննութեամբ զբաղուել է մեծավաստակ Հ. Աճառեանը: Նա վեր է հանել եւ քննել երեք տասնեակի հասնող բառեր, որոնք գրաբարեան բառարաններում աւանդուած չեն, ճշտել բառային մի շարք իմաստներ³:

Ստորեւ ներկայացնում ենք Հ. Աճառեանի նկատած նորայայտ բառերը.

Անխում (խմոր բառի խում արմատն է), անտոնեայ, արդեալ (եբրայական բնագրում տաշած, տաշուած), բերանպարիշտ «մատուակ», դահանակեայ, երկուցեալ, զառիվերակ, զմծեալ «ապականուած», լրի (իմաստը ստոյգ չէ), խաշնտես «հովիւ», խմեալ (տես անխում), խոստաւոր «նուէր» ծխնի, կամախի, «յուզարկաւորութիւն», կեատարած «մարմարիոնով սալայատակուած կոյտ», ջոկ, «երամ», հանելի (գործիք է), հեծանացու «գերան շինելու փայտ», հրաւանդ (գործիք է), մայրակոփ (մայրի «փայտ» եւ կոփել), մանգառ (խմորեղէնի տեսակ), մաշկ «վրան», մուղ «գրաստ», յատակ (տեղ նշանակութեամբ), ոտնջեռեայ «ժողով, հաւաքոյթ», ուղերկութիւն «յուզարկաւորութիւն», պատգարհել (այլ բնագրերում՝ զօրութիւն) ստանձնակիր (այլ բնագրերում՝ բեռնակիր), ստանձնաւոր «բեռնակիր», ստորէ (իմաստը յայտնի չէ), վարմ «ցանցակերպ զարդ», վերստորի «ջուլհակի գործիք», վսեստակ «ռոճիկ պաշարեղէնով վարձ», տոհմն (նկատի ունի Ե-ով ուղղական ձեւը), տոփայ «կարթ, լաստ», քակքով «սրահ», «քարապսակ» քարաժայռ, բարձրավանդակ, քեփուր «բաժակ»⁴:

Նկատենք, որ մեծ գիտնականի տեսադաշտից վրիպել են նման կարգի մի քանի այլ բառեր. դրանք են. զոհիչ, գաւրապսակ,

ժամանակագէտ, լամբաւոր, ծովագործ, շաբաթաւորութիւն, ողնափող, պարհակապան, փայտամայր, վանդակակաձեւ:

Երեք տասնեակից աւելի նորայայտ բառերն արդէն իսկ բառարանագրային որոշակի արժէք են ներկայացնում եւ անպայման պէտք է տեղ գտնեն նոր հրատարակութիւնք գրաբարի բառարաններում:

Եղիշէ Դուրեանը բառային այս միաւորները դասակարգում է երեք խմբի. ա) բոլորովին անծանօթ կամ օտար բառեր (մանգառ, վսեստակ...), բ) նորովի գործածուած բառեր. մաշկ «վրան», ափամբ եւ ափամբ «դարիւ դարիւ», գ) բառեր, որ առկայ են յետին մատենագրութեան մէջ. վարդապետ (վարպետի նշանակութեամբ, իրիկուն, ցայգապահ...)⁵:

Անդրադառնանք մի քանի բառերի իմաստային եւ ստուգաբանական իւրայատկութիւններին. համեմատութեան համար բնագրին զուգահեռ կը բերենք Աստուածաշնչի Զոհրապեան հրատարակութեան համապատասխանակը:

Հոսել - Նորագիւտ մնացորդացում ներքոյիշեալ կիրառութեան դէպքում ունի «տանել, վերցնել» իմաստը:

Նորագիւտ մնացորդաց | Զոհրապեան Աստուածաշունչ
...եւ առ զքարինս ... եւ նայն քարինս եւ զփայտս նորա զփայտս... (Բ.ԺԶ.6)

Համեմատել «դիմակայել»: ՆՀԲ-ն այս իմաստը դարձեալ չունի.

Ի ձեռն քո է ամենայն | ... եւ ի ձեռս քո զօրութիւն եւ հաստութիւն ուժոյ եւ ոչ ոք տուութիւն եւ չիք այն ոք, կարէ կալ ընդդէմ քո: որ համեմատէ քեզ (Բ.Ի.6)

Ազգագիր «տոհմագրութիւն, ծննդաբանութիւն»: Բառը ՆՀԲ-ում չկայ: Ահա Նորագիւտի վկայութիւնը. «...ոչ եթէ չիցեն գրեալ ի պատգամս Սամիա մարգարէի եւ Յատոքա տեսանողի ազգագրաւ եւ գործովք իւրովք հանդերձ» (Բ.ԺԲ.15): Զոհրապեանում այս բառը պակասում է:

Աստուածաշնչի այլ հրատարակութիւններում (Պոլիս, 1895) ծանօթագրում է, որ եբրայական բնագիրը տեսանողի դիմաց ունի յազգահամարին: Նորագիւտի հայ թարգմանիչը եբրայերէն համապատասխան բառը թարգմանել է ազգագիր, որ եւ պէտք է բառարանագրել:

Ծովագործ - «Եւ արդ առաքեսցես դու ինձ արս իմաստունս, որ տեղեակ իցեն ոսկւոյ եւ արծաթոյ, պղնձոյ, երկաթոյ, ծովագործ ծիրանոյն կարմրոյ կապուտակի եւ բեհեզ նիւթոյ» (Բ. Բ. 7): Ծովագործը, ըստ երեւոյթին, առարկայի հետ կապուած գոյնի անուանում է, որ հանդէս է գալիս ծիրանի բառի յարադրութեամբ: Զոհրապեանում կարդում ենք. «...զպղինձ եւ զերկաթ եւ զծիրանի եւ զկարմիր եւ զկապուտակի, եւ զբեհեզն»: Աստուածաշնչի Դանիէլի գրքում կայ ծովագոյն. «Եւ մարմին նորա ծովագոյն եւ երեսք նորա իբրեւ զտեսիլ փայլական» (Ժ.6): Եբրայական բնագրում ընդգծուած բառի փոխարէն բիրեղ է, իսկ յունարէն բնագրում՝ θαρσις: Դանիէլի գրքի յիշեալ հատուածի ծովագոյնը աշխարհաբար թարգմանուել է ծովագոյն («Նրա մարմինը ծովագոյն էր, նրա դէմքը փայլակի տեսք ունէր»)՝, ռուսերէնում՝ тело его как топаз⁷, յունարէնում՝ θαρσις:

Քարապսակ «լեռնագագաթ, քարաժայռ» - «...ածէին զնոսա ի կատար քարապսակին եւ անդ քարավէժ առնէին» (Բ.ԻԵ.12): Զոհրապեանում այսպէս է. «Եւ ածին զնոսա ի գլուխ քարանձախն եւ գահավէժ առնէին», աշխարհաբար թարգմանութեամբ՝ քարաժայռի գլուխը, ռուսերէնում՝ на вершине скалы: Քարապսակ ՆՀԲ-ն չունի: Նոյն բառարանը պսակի համար նշում է «եզր» իմաստը. այդ իմաստը կար թերեւս եւ հինգերորդ դարում, որից էլ կերտուել է քարապսակ երկբաղադրիչ կազմութիւնը:



Կճեատարած «քարայտակ, սալայտակ» - «...եւ անկանէին ամենայն ժողովուրդքն յերկիր ի վերայ երեսաց իւրեանց, ի վերայ կճեատարած սալայարկ յատակացն» (Բ.Է.3): ՆՀԲ-ն ունի կիճ «կարծր քար, մարմարիոն», կճեայարկ, իսկ կճեատարած ՆՀԶ-ում չկայ:

Ստորէ - «Տէր Աստուած հարցն մերոց դու այն ես, որ յերկինս եւ ի վերայ երկրի ստորէ եւ իշխես դու ի վերայ ամենայն թագաւորութեանց հեթանոսաց» (Բ.Ի.6): Աճառեանը այս հատուածի մասին գրում է. «Եբրայականը տառ առ տառ նոյն լինելով եթեմանայից հետ վերջինս առաջնոյն տեղ դրի: Ուրեմն երկուքի մէջ ալ կը պակասի եւ ի վերայ երկրի ստորէ: Երկրորդ ձեռագիրը ունի ստորուտէ: Բայց ոչ մին եւ ոչ միւսն կը յարմարի այստեղ»⁸: Աճառեանը առաջարկում է ի վերայ երկրի ստորէ ուղղումը: Արիստակէս Վարդանեանը առաջարկում է նոր սրբագրութիւն. «դու այն ես, որ յերկինս, եւ ի վերայ երկրի եւ ի ստորէ», «որ է ըսել յերկինս, յերկրի եւ ի սանդարամետս (=ի ստորոյ երկրի)»⁹:

Անվերապահօրէն չառարկելով վերոյիշեալ սրբագրմանն ու ուղղմանը՝ առաջարկում ենք ընդունել ստորել բայի գոյութիւնը ստոր «ցած, ներքեւ» արմատից. ստորէ կը նշանակի իջնում է, որը եւ հարիւր է բնագրին:

Կիճ «քար, մարմարիոն»: Կարելի է առնչել խիճ-ի հետ: Խիճը սեմական ծագում ունի. հմմտ. ակկադ. hiššu «խիճ»¹⁰:

Վսեստակ - Ըստ Արմատական բառարանի՝ «ռոճիկ, թոշակ, բանուորներին տրուած վարձ պաշարեղէնով»: Ահա Նորագիւտի միակ վկայութիւնը. «Եւ ահաւասիկ գործաւորացը փայտահարիչ ծառայից քոց հրաման տուաք տալ վսեստակ ցորենոյ քոռս քսան հազար եւ գարոյ քոռս քսան հազար...» (Բ.Բ.10): Ա. Փերիխանեանը նկատում է, որ վսեստակը համապատասխանում է եբր. makkōt «ջար-

Յառուրն ձիւնաբերի (Ա. ԺԱ.22): ...յառուր ձեան:

Կարելի է շարունակել այս զուգար- ռումները եւ հաստատել, որ Նորագիւտ մնացորդացի թարգմանիչը բարդ բառեր շատ է օգտագործել: Այս հարցում հաւա- նօրէն դեր ունի ասորական բնագիրը (յատկապէս այն, որից օգտուել է թարգ- մանիչը): Բացառուած չէ եւ բարդ բառերի կազմման հեղինակային (թարգմանչի) նա- խածեռնութիւնը: Առայժմ գոնէ մեզ հա- մար դժուար է տարբերակել հեղինակային նորակազմութիւններն ու բնագրային պատճէնում-թարգմանութիւնները:

1. Բառապաշարի ժողովրդախօ- սակցական շերտ

Հինգերորդ դարի նոյնիսկ ամենաըն- տիր գրաբարով գրուած գործերում առկա- յանում են ժողովրդախօսակցական ոճին բնորոշ բառեր ու բառածեւեր: Վերջիննե- ըրիս տարբերակումը, սակայն, այնքան էլ դիւրին չէ, մանաւանդ որ ամբողջական չեն մեր պատկերացումները 5-րդ դարի բարբառների, դրանց եւ գրական լեզուի փոխարարներութեան, գրական նորմայի չափանիշների, բառերի իրական յաճախ- կանութեան եւ այս կարգի այլ գործոննե- ըրի վերաբերեալ:

Այդուհանդերձ, որոշ սկզբունքների ու չափանիշների կիրառումով կարելի է փորձել տարբերակել գրական նորմային յարող կամ, այսպէս կոչուած, ժողովրդա- խօսակցական տարրերը: Այս դէպքում պէտք է հաշուի առնել՝ ա) բառի արտա- քին-հնչիւնական կազմը, բ) հոմանիշու- թիւնը, գ) արդի բարբառներում բառի առ- կայութիւնը, դ) բառի յաճախականութիւ- նը, ե) բառակազմական իւրայատկութիւն- ները եւ այլ հանգամանքներ:

Վերը բերուած երեք տասնեակից ա- ւելի նորայայտ բառերի զգալի մասը, ըստ յիշեալ չափանիշների, կարելի է բնորոշել

որպէս ոչ գրական խօսակցական: Անդրա- դառնանք մի քանի բառերի՝ դարձեալ հա- մեմատութեան եզր ունենալով Մնացոր- դաց գրքի քննական հրատարակութիւնը:

Գում

... եւ ել ինքն եկաց ի անկաւ ի վերայ ծնագց վերայ նորա առաջի ա- մենայն ժողովրդոցն Իս- ռայէլի, էջ ի գուճ եւ համբարձ զձեռս իւր ... (Բ. 2. 13):

Գումը նուազ յաճախական է, քան ծուճը: Գում եւ իջանել ի գում դարձուածը կարելի է համարել տարածքային տար- բերակ:

Վերը բերուած հատուածում ուշա- գրաւ է ժողովուրդ բառի կիրառութիւնը. բնագրի ասորերէն համապատասխանակը ակնյայտօրէն յունարէն Έκκλησια, հա- յերէն՝ եկեղեցի բառն է, որն ունի «հաւա- քոյթ, հաւաքատեղի», հետագայում նաեւ՝ «եկեղեցի» իմաստները: Նկատենք, որ հինգերորդդարեան, ինչպէս նաեւ արդի ընկալմամբ ժողովուրդ աւելի դիւր ընկալե- լի է, քան եկեղեցի: Յիշենք, որ ժողովուրդը 5-րդ դարում ունէր նաեւ «ատեան, ժո- ղով» իմաստները:

Ձոհրապեան հրատարակութեան եկե- ղեցի բառի դիմաց Նորագիւտը մի քանի տեղ ունի ժողովուրդ: (Բ.Լ.4, Բ.ԻԹ.28):

Հաշի

Եւ այս հաշի քահանա- յիցն (Բ.ԼԱ.17):

Հաշիը գրաբարեան մատենագրու- թեան մէջ մի քանի անգամ է հանդիպում, բաւական հազուադէպ է նաեւ բառակազ- մութեան մէջ, իսկ համարը՝ հակառակը:

Փշրել

Փշրեցան նաւքն (Բ.Ի.37):

Ծաշակ

Բաժակքն եւ ճաշակքն եւ խնկաղացքն եւ կրակարանքն ամենայն ոսկւոյ (Բ. Գ.22):

Ձիք: Եւ կրակարանքն ամենայն ոսկւոյ (Բ. Գ.22):

Ծկոյթ

Եթէ ծկոյթ իմ ստուար է Փոքր մատնս իմ ստուա- քան զմէջ հաւր իմոյ ռազոյն է քան զմէջ հօր (Բ.Ժ.10):

Գրականի եւ ժողովրդախօսակցականի հակադրութիւնը ակնյայտ է: Գրաբարում կայ եւ ճկոյթ: Ինչպէս նշում է Հ. Աճառեա- նը՝ «Հնագոյն եւ ընտիր ձեւն է ծկոյթ»²⁰: Ծկոյթ/ճկոյթ ձեւերը գործածական են մի շարք բարբառներում:

Տիկիւն

Եւ տիկինն հարաւու Եւ թագուհին Սարայ լուաւ զիմաստութիւնն լուաւ զանուն Սողոմոնի: Սողոմոնի (Բ.ԻԹ.1):

Վաղ գրաբարում -ուհի- իգականակեր- տով կազմութիւնները յաճախական չէին: Դասական գրաբարում թագուհի բառը վկայուած է մէկ-երկու անգամ Աստուա- ծաշնչում: Թագուհի բառի փոխարէն օգ- տագործուած է տիկիւն, դշխոյ...:

Մատաղ

Որդեակ իմ մանուկ մատաղ է ...մանուկ փոքր: (Ա.ԻԲ.5):

Մորթել

Ղեւտացիքն մորթեցին Ղեւտացիքն յօշեցին եւ պատրաստեցին զողջա- կէզս (Բ.ԼԵ.12):

Ծառայութիւն

Ի վերայ գործոց ծառայու- թեան (Ա.Թ.19):

Հարուած

Եւ կոչեաց զանուն տեղ- ւոյն այնորիկ հարուածք Ողիայ (Ա.ԺԳ.11):

2. Բարդ բառեր

Նորագիւտ Մնացորդաց գրքում ա- ռանձնանում են մի շարք բառեր (ինչպէս կցական, այնպէս էլ յարադիր բարդու- թիւններ), որոնք ակնյայտ ժողովրդական մտածողութեան կնիքն են կրում, խօսակ- ցական-բարբառային երանգ ունեն, որն ակնառու է դառնում Նորագիւտ Մնացոր- դացի եւ Մնացորդաց գրքի այլ հրատա-

րակութիւնների համադրութեամբ: Վերն արդէն խօսել ենք սրտառաջ եւ ողնափող բառերի մասին, որոնց համապատասխա- նակները Աստուածաշնչի այլ հրատարա- կութիւններում ուրիշ բառեր են: Բերենք օրինակներ:

Միասունի

...զի զամենայն խուժա- ...վասն զի զամենեսեան դուժ ազգաց նորա կո- զերիցագոյնսն կոտո- տորեաց եւ զբանակն ռեաց, հէնն եկեալ ի վե- միաստնեաց (Բ.ԻԲ.1): ռայ նոցայ, արաբացիքն եւ աղիամազովնեայքն:

Միասունիները, ըստ աւանդութեան, ամազոնուհիներն են. Նորագիւտի թարգ- մանիչը մէկ այլ հատուածում այդպէս էլ թարգմանել է (Բ.ԺԳ.15):

Որմաշէն «որմնադիր»

Եւ ետ բերել ճարտարպետս ...եւ շինօղս որ- որմաշինաց եւ ճարտարպետս մից եւ եւ հիւ- փայտագործաց (Ա.ԺԳ.1): սունս փայտից:

Որմաշէն բառով ՆՀԲ-ն վկայում է միայն օրինակ Բիւզանդից: Փայտաշէն էլ հիւսն-ի համեմատութեամբ նուազ յաճա- խական է:

Սրտառաջ «կուրծք»

Եւ եհար զարքայն Իս- Եհար զարքայն Իսրայել- րայիւացոց ընդ մէջ լի ընդ մէջ թոքոյն եւ սրտառաջն եւ ողնա- լանջաց: փողին եւ թափ եհան (Բ.ԺԸ.33):

Խաշնտես

Եւ բանակս առին խաշնտե- Եւ առին աւար զա- սաց եւ անդ հարին կոտո- մենայն քաղաքս նո- ռեցին զամազոնսն եւ առին ցա ... այլեւ զվրանս զհօտսն բազումս եւ զուղ- անասնոցն նոցա ա- տերամակսն (Բ.ԺԳ.15): ռին:

Գրաբարում հոլիւ բառը ունի բազմա- թիւ հոմանիշներ, որոնց պէտք է աւելացնել եւ խաշնտեսը, որը բառարանները չունեն:

Բերանպարիշտ - բառի մասին խօսել ենք մէկ այլ առիթով: Բառի ժողովրդախօ- սակցական երանգը անժխտելի է. հաւա- նաբար, մատոռակ-ից աւելի վաղ է գործա- ուել: Վերջինս գրաբարեան, յատկապէս

Հինգերորդադարեան մատենագրութեան մէջ յաճախական չէ²¹:

Ոսնջեռնայ - «եւ արար յաւուրն ութերորդի զոտնջեռեայսն, զի եւթն օր արար զնաւակատիս...» (Բ. է. 9): Եբրայական բնագիրը այս բառի դիմաց ունի «ժողով մեծ», իսկ եթեանասնից թարգմանութիւնը՝ «ելս»: Աճառեանը այս բառի մասին գրում է. «Ասիկա Աստուծոյ թառնի հակառակն է, որովհետեւ Աստուծոյն անունն պատրաստական մասն է, իսկ ոսնջեռնայքը բուն տօնը կամ տօնին վերջաբանը. կը թուի կազմուած ըլլալ ոսն եւ ջեռնուլ բառերէն, սակայն անոնց ներքին կապը անըմբռնելի է ինձ»²²:

Տարբեր բնագրերի համադրումը ակնյայտ է դարձնում, որ ոսնջեռնայ-ն ունի «հաւաքոյթ, ժողով» իմաստները: Ընդունելի է եւ Աճառեանի բառակազմական վերլուծութիւնը, այնինչ, իրօք, բաղադրիչներին ներքին իմաստային կապի մեկնութիւնը բաւական դժուար է, մանաւանդ, երբ յայտնի չէ բուն ասորական բնագրի համապատասխանակը:

Կարելի է տարբեր ենթադրութիւններ անել՝ զուգահեռներ փնտրելով ոչ միայն հայ, այլեւ օտար իրականութեան մէջ, բայց, քանի որ թարգմանիչն է ստեղծել բառը, ուրեմն առաջին հերթին պէտք է ենթադրել ներքին իմաստային կապի հայկական ակունքները: Մեզ թւում է՝ թարգմանիչը նկատի է ունեցել ջերմութեան որեւէ աղբիւրի (թոնիր, վառարան, բուխարի) շուրջ հաւաքուելով՝ խորհրդածելու, գրուցելու, հարցեր քննարկելու սովորոյթը, որը մինչեւ ոչ վաղ անցեալը տարածուած էր յատկապէս գիւղական բնակչութեան միջավայրում:

Նկատենք, որ ժողովրդախօսակցական շատ բառեր առկայանում են յատկապէս թարգմանական գրականութեան մէջ: Օրինակ. Ետեախաղաց «ժորուն» կայ Բարսեղ Կեսարացու գրքում²³, Գիրք թղթոցում

հանդիպում ենք մէկ այլ ուշագրաւ բառի՝ կերտուրաց. «...զի վասն հերբայեցուցն ասաց զկերեւուրացաց եւ զաստուածամարտաց ազգն զորս յարգէրն վասն արմատոյն»²⁴: Այս իմաստը ուտող-ուրացող արտայայտութեամբ գործածական է բարբառներում եւ խօսակցական լեզուում:

Նորագիւտ Մնացորդացում աւելի յաճախական են բայական յարադրութիւնները, դարձուածային միաւորները, որոնք դարձեալ ժողովրդախօսակցական ոճին բնորոշ ձեւեր են, ինչը երբեմն յուշում է յարադրութեան այս կամ այն բաղադրիչը:

Յոտն կալ

Յոտն կացին Ղեւտացիքն | Յարեան զեւտացիքն: (Բ.ԻԹ.12):

Ունչս առնել

Եւ լինէր իբրեւ զի ծիծաղէին զնոքօք եւ ունչս առնէին եւ արհամարհէին զնոսա (Բ.Լ.10):

...եւ լինէր ծաղր իմն առնել զնոսա եւ արհամարհէին: (Բ.Լ.10):

Այլ օրինակներ. կոխան արարիս (Բ.ԻԵ.18) - կոխեցին, ուխտ եղիս (Բ.ԻԳ.16) - ուխտեաց, ձեռն մի ձգիցէք (Բ.ԺԸ.30) - մի պատերազմիցիք:

3. Իչ-ով ենթակայական դերբայների առատութիւն

Յայտնի է, որ դասական գրաբարում ենթակայական դերբայը սահմանափակ կիրառութիւն ունի, եւ յաճախ դերբայների իմաստը արտայայտում է դիմաւոր բայի եւ որ յարաբերական դերանունան միջոցով²⁵: Այս երեւոյթը նկատելի է յատկապէս յունարէնից կատարուած թարգմանութիւններում: Թարգմանական այս նրբութիւնը կարելի է համարել թարգմանութիւնը «գրականացնելու» միտում, ասել է թէ՛ թարգմանիչն էլ զգացել է դերբայների կիրառութեան առանձնայատկութիւնը:

Նորագիւտ Մնացորդացի քննութիւնը պարզում է, որ այնտեղ սովորական է իչ-

ով ենթակայական դերբայների կիրառութիւնը:

Եւ կարգեաց Դաւիթ առաջի տապանակին կտակարանաց երգիչս եւ օրհնիչս (Ա.ԺԶ.4)

...երգել ճայնիւ եւ խոստովան լինել:

Զի այր էր նա խոովիչ, մարտիկ պատերազմող (Ա.ԺԸ.10):

...պատերազմ տայր ընդ նմա:

Ի սոցանէ ստիպողք եւ վարիչք ի գործ ... եւ դպրք եւ երգիչք (Ա.ԻԳ.74):

...ի սոցանէ գործավարք ... եւ չորս հազար դպրք:

Ընկենոր առաջի գերեզմանացն զոհնացն նոցա (Բ.ԼԳ.4):

...որք զոհէին նոցա:

Այս կարգի օրինակները բաւական շատ են, ինչը հիմք է տալիս հաստատելու, որ իչ-ով կազմութիւնները յաճախական են եղել նախագրային շրջանում: Նրանց գործառութիւնը մասամբ սահմանափակուել է գրաւոր-գրական լեզուի աւանդոյթների տարածման գործընթացում՝ գրաւոր խօսքը գրականացնելու միտումով: Քանի որ նորագիւտը չիմբաբարուած, որոշ չափով ազատ թարգմանութիւն է, ապա այնտեղ համեմատաբար շատ են իչ-ով կազմութիւնները՝ որպէս բանաւոր խօսքին առանձնայատուկ տարրեր:

4. Չ-ով ժխտական կազմութիւններ

Գրաբարում չ-ով եւ -ոչ-ով ժխտականները ակնյայտօրէն հակադրում են որպէս գրական (գրաւոր) եւ խօսակցական (բանաւոր) ոճերին բնորոշ տարբերակներ:

Քննութեան առարկայ գրքում կան չ-ով բազմաթիւ ժխտական ձեւեր:

Զիք չափ կըռոյ (Ա.ԻԲ.10): Ընդ իս տէր չիք խօսեցեալ (Բ.ԺԸ.27):

...ոչ գոյր թիւ: ...ոչ խօսեցաւ ընդ իս տէր:

Զիք այն, որ համեմատէք եզ (Բ.Ի.76):

...ոչ ոք կարէ գալ ընդդէմ քո:

Ընդէր չարարեր ինդիր (Բ.ԻԳ.6):

...ընդէր ոչ արարեր:


Ժողովրդախօսակցական շերտի լաւագոյն ուսումնասիրող Ա. Այտընեանն էլ տարբերակում է չ-ով եւ -ոչ-ով կազմութիւնները՝ վերջիններս որակելով «ճիշտ եւ ծանր գրաբար»²⁶:

Դ. ԱՍՈՐԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

5-րդ դարում թարգմանել են ասորերէնից կամ յունարէնից: Յայտնի է, որ առաջին թարգմանութիւնները (այդ թւում՝ Սուրբ Գիրքը) ասորերէնից են: Դասական շրջանի թարգմանական գրականութեան լեզուի հիմնական արժանիքը այն է, որ, անկախ թարգմանուող լեզուից, գրաբարը ներկայանում է իր ճոխ քերականական, բառապաշարային համակարգով, հայեցի: Սա առաջին հերթին գրաբարի, ապա եւ թարգմանչի շնորհիւ է: «Դասական շրջանի գլխաւոր թարգմանչական սկզբունքը եղել է բնագրի հարազատ, բայց ոչ ստրկական վերարտադրութիւնը, որ հնարաւորութիւն է տալիս, առանց մեղանշելու հայոց լեզուի օրինաչափութիւնների դէմ, ճշգրիտ կերպով արտայայտել բնագրի բովանդակութիւնը եւ իմաստային երանգները: 5-րդ դարի հայկական թարգմանութիւնները, որպէս կանոն, աչքի են ընկնում լեզուի հարստութեամբ ու մաքրութեամբ եւ սահուն, նրբաճաշակ ոճով»²⁷:

Ուսումնասիրողները վաղուց նկատել են նաեւ, որ յունարէնից եւ ասորերէնից կատարուած թարգմանութիւններում որոշ առանձնայատկութիւններ են ի յայտ գալիս: Այս երեւոյթը, սակայն, հիմք չի տալիս հաւաստելու 5-րդ դարում թարգմանական երկու՝ ասորական եւ յունական դպրոցի գոյութեան փաստը, մանաւանդ յայտնի է, որ նոյն հեղինակները (Սահակ Պարթեւ, Եղնիկ Կողբացի, Յովսէփ Պաղնատի) թարգմանել են ե՛ւ ասորերէնից, ե՛ւ յունարէնից: Ասորերէնից եւ յունարէնից կատարուած (խօսքը յունաբան հայերէնին չի վերաբերում) թարգմանութիւններում

78-2006



նկատուող որոշ լեզուաբերականական երևույթներ, նախ եւ առաջ, բնագրի իւրա-
յատկութիւնների արտացոլումներն են: Ա-
սորերէնից թարգմանուած գրականութեան
լեզուի որոշ առանձնայատկութիւնները՝
ասորաբանութեան դրսեւորումներին անդ-
րադարձել են նշանաւոր Հայագէտներ Ն.
Ակիմեանը, Ա. Վարդանեանը եւ ուրիշներ:
Խնդիրը Համապարփակ քննուած է ասո-
րագէտ Լ. Տէր-Պետրոսեանի մի շարք աշ-
խատութիւններում²⁸:

Հիմք ընդունելով ուսումնասիրողնե-
րի նկատառումները՝ փորձենք ցոյց տալ
քննութեան առարկայ գրքում նկատուող
ասորաբանութիւնները:

Դրանք առկայում են.

Ա) Յատուկ անունների գրութեան
մէջ. յունարէն Ը-ի դիմաց՝ շ:

Որդիք Յաւանու Եղի- շան, Թարշիշ եւ Բեթ- րին (Ա.Ա.7):	...որդիքն Յովիդեայ Ե- լիսա եւ Թարսիս
Փոխանակ նորա Ծառուղ (Ա.Ա.48):	... Սառուղ
Քահանայք նորա եւ Ծուշա դպրապետ նորա (Ա.ԺԸ.16):	Քահանայք եւ Սուսա դպրապետ

Ի յայտ են գալիս նաեւ յատուկ ա-
նունների գրութեան այլ ձեւեր, որոնք ա-
սորերէն գրութեան կամ արտասանութեան
ուղղակի անդրադարձներն են՝ Խիրամ-Քի-
րամ, Սուրբի-Սեպփիանոս, Թէկէմ-Թո-
քան եւ այլն:

Բ) Խօսել կալաւ շարահիւսական կա-
ռոյց.

Նորագիւտ մնացորդացում բազմիցս
Հանդիպում ենք յիշեալ ոճին: Հմմտ. «Ա-
պա ել Դաւիթ ընդառաջ նոցա, խօսել կա-
լաւ եւ ասաց ցնոսա» (Ա.ԺԲ.17): «Յայնմ
ժամանակի խօսել կալաւ...» (Բ.ԺԵ.3),
նաեւ՝ (Ա.ԻԱ.24, ԺԵ.72):

Աստուածաշնչի այլ Հրատարակու-
թիւններում խօսել կալաւ-ի փոխարէն ասել
բայի խոնարհուած ձեւն է՝ ասաց, ասէ:

Գ) Բայական յաւելադրութիւններ

Սատակեցից ջնջեցից
յերկրէ (Բ.Ե.20):

Ջօրացաւ քաջալերեցաւ
ընդիստանցաւ խլել հա-
նել զամենայն պաշտա-
մունս պղծութեան յերկ-
րէն Յուդաս (Բ.ԺԵ.8):

Անկամ կործանեցամ
Հնդիկքն (Բ.ԺԴ.13):

Ապա յարեաւ խաղաց
գնաց ի վերայ նորա
(Բ.ԻԱ.9):

Առնել կազմել պատ-
րաստել շտեմարանս
(Բ.ԼԱ.11):

Պեղեցին հառնին անտի
արտաքս (Բ.ԻԹ.16):

Արդ եթէ ածից կարկե-
ցից փակեցից գերկին
(Բ.Ե.13):

Արդ եթէ հայելով հա-
լեսցիս դու (Բ.Զ.19):

Այն, որ բայական յաւելադրութիւնը,
սաստկացումը բնորոշ են սեմական լեզու-
ներին, դեռեւս մեզ 5-րդ դարում իրազե-
կում է Եւսեբիոս Եմեսացին. «Առանձին
բարք են Հեբրայեցւոց կրկին զբանն ասել,
որպէս յորժամ ասիցէ թէ՛ երթալով երթալ-
ցես եւ կելով կեցցես եւ մահու մեռանիցիս,
փոխանակ ասելոյ՝ թէ՛ երթիցես...»²⁹:

Սա օտար լեզուի քերականական իրո-
ղութիւններին վերաբերող լեզուաբանա-
կան առաջին գիտական տեղեկութիւննե-
րից է, որը, հաւանաբար, նպաստաւոր դեր
է խաղացել օտար բնագրերի ճիշտ ընկալ-
ման եւ թարգմանելու գործում: Նկատենք
նաեւ, որ յաւելադրութիւններ առկայ են
5-րդ դարի ինքնուրոյն գրականութեան
մէջ, որոնք եթէ ժողովրդախօսակցական ո-
ճի արտայայտութիւն էլ Համարենք, ապա
չպէտք է բացառենք եւ ասորերէնի ազդե-
ցութեան գործօնը:

Այսինքն՝ թարգմանութիւնները շնոր-
հիւ է, որ գրաբարում յիշեալ ոճական Հնա-
րանքը դարձել է յաճախական ու կենսու-

Բարձից զձեզ յերկրէս

Ջօրացաւ եւ եհան ար-
տաքս:

Անկան եթովպացիքն:

Եւ գնաց Յովրամ...

...պատրաստեցէք եւ
այլ եւս շտեմարանս:

...եւ Հանին արտաքս:

...եթէ արգելից գերկինս:

...եւ արդ Հայեսցիս:

նակ, նաեւ՝ դասական գրաբարի բնորոշ ա-
ռանձնայատկութիւններից մէկը:

Նորագիւտ մնացորդաց գիրքը Հին
Հայերէնի օրինաչափութիւնները Հաստա-
տող տուեալներից զատ ներկայանում է
բազմաթիւ նոր բառերով, խօսակցական,
բանաւոր լեզուին բնորոշ բառաձեւերով ու
կապակցութիւններով: Զերծ լինելով յու-
նարէն բնագրի Համեմատութիւնից եկող
որոշ կաղապարումից՝ Նորագիւտը աւելի
անմիջական է ներկայացնում 5-րդ դարի
գրաբարի վիճակը՝ կրելով նաեւ ասորաբա-
նութեան որոշ հետքեր: Այն առաւել, քան
5-րդ դարի որեւէ երկ իրապէս ներկայաց-
նում է դարաշրջանի խօսակցական լեզուն՝
Հաստատելով 5-րդ դարի գրական եւ խօ-
սակցական շերտերի առկայութիւնը:

Եւ վերջապէս, Նորագիւտ մնացորդաց
գրքի քննութիւնը առաջադրում է Հայ
թարգմանական գրականութեան լեզուի
հիմնաւոր ու մանրազնին քննութեան
անհրաժեշտութիւնը, առանց որի աններե-
լիորէն թերի կը լինեն նախնեաց ոսկեղե-
նիկ լեզուի մասին ունեցած մեր պատկե-
րացումները:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Գիրք մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմա-
նութեան. զատաշինն ած ի լոյս ըստ կրկին ձեռա-
գիր օրինակաց, հանդերձ ք լուսագիր մնամա-
տպութեամբք անցին, Գրիգոր Խալաթեանց,
Մոսկուա, 1899:
- Մեզ յայտնի ուսումնասիրութիւններն են՝ Գր.
Խալաթեանց, Ա եւ Բ մնացորդաց գրքերի նորա-
գիւտ հայ թարգմանութիւնը, Վաղարշապատ,
1896 (արտատպում «Արարատ» 1896 թ. յուլիսի
համարից): Հ. Ք. Չրաքեան, Գիրք մնացորդաց
ըստ հնագոյն հայ թարգմանութեան, - «Բազմա-
վէպ», 1900, էջ 117-122: Եղիշէ եպ. Գորիսեան,
«Մնացորդաց գրքեր» ու նորագիւտ թարգմանու-
թիւնը, - «Մասիս», 1900, էջ 515-519: Մովսէսեան,
Մնացորդաց գրքերուն հին հայ թարգմանու-
թիւնները, - «Սիոն», 1937, թիւ 4, էջ 109-114:
Մնացորդաց գրքերուն ուսումնասիրութիւններում լեզուա-
վերոյիշեալ ուսումնասիրութիւններում լեզուա-
կան նկատառումները ընդգրկում չեն: Նշում են

- մի քանի նորայայտ բառեր, իմաստներ, որոշ ա-
սորաբանութիւններ:
- Հ. Աճառեան, Հայերէն նոր բառեր Նորագիւտ
մնացորդաց գրոց մէջ, Վիեննա, 1908: Աճառե-
անի նկատած բառերը հետագայում ընդգրկուել են
Արմատական բառարանում:
- Հ. Աճառեանի ցանկի որոշ բառեր բառարաննե-
րում վկայուած են. հեղինակը նկատի է ունեցել
նաեւ բառիմաստները:
- Տե՛ս «Մասիս», 1900, էջ 518:
- Աստուածաշունչ մատեան, հին եւ նոր կտակա-
րաններ. արեւելահայերէն նոր թարգմանութիւն,
Մայր աթոռ Ա. Էջմիածին, 1894:
- Библия, книга священикого писания ветхого и
нового завета, Москва 1976.
- Հ. Աճառեան, Հայերէն նոր բառեր..., էջ 30:
- Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1911, էջ 495
- Գ. Ջահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն, Ե-
րեւան, 1987, էջ 465:
- Տե՛ս Annual of Armenian linguistics, 6, 1985, էջ
76-79:
- Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշա-
պատ, 1912, էջ 612:
- Գ. Ջահուկեան, նշ. աշխ., էջ 206:
- Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1912, էջ 290:
- Հ. Աճառեան, Հայերէն նոր բառեր ..., էջ 26:
- Գ. Ջահուկեան, նշ. աշխ., էջ 558:
- E. Benveniste, Emprunts iraniens en arménien
(Transactions of the philological society, 1945. pp.
75-77).
- Մարդամահ-ի՝ ՆՀԲ-ի հիմնգործողարեան բոլոր
վկայութիւնները ասորերէնից կատարուած
թարգմանութիւններից են: Հստ երեւոյթին,
թարգմանիչները պատճենել են ասորերէն հա-
մապատասխան բառը:
- Նոյնը նաեւ Բ.Ը.5
- Տե՛ս Արմատական բառարան, ճկոյթ բառայօդու-
ածը: Ծկոյթ կայ եւ Աստուածաշնչի Գ.
Թագ.ԺԲ.10, որը նոյն հատուածն է, ինչ Նորա-
գիւտ մնացորդացում:
- Մատուցող Արմատական բառարանում ստու-
գաբանուած չէ: Գ. Ջահուկեանը այն համարում
է իրանական փոխառութիւն (տե՛ս Հայոց լեզուի
պատմութիւն, էջ 533): Նկատենք, որ իրան. r -
հայ ռ յուշում է, որ բառը հնագոյն փոխառութիւն
չի կարող լինել:
- Հ. Աճառեան, Հայերէն նոր բառեր ..., էջ 26:
- Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցօրեայ արար-
չութեան, աշխ. Կիմ Մուրադեանի, Եր. 1984, էջ
266:
- Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1921, էջ 22:
- Տե՛ս Հ. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն,
Հտ. Բ, 1951: էջ 87, Ա. Աթրախամեան, Գրաբարի
ձեռնարկ, Եր. 1976, էջ 161-162:

- 26 Ա. Այտընեան, *Քննական քերականություն արդի հայերեն լեզուի*, Վիեննա, 1866, էջ 67:
- 27 Լ. Տեր-Պետրոսեան, *Հայ հին թարգմանական գրականություն*, Եր. 1984, էջ 10:
- 28 Հարցը առելի խորությամբ է քննուած հեղինակի դոկտորական ատենախօսութեան մէջ, որին ժամանակին հնարատրութիւն ենք ունեցել ծանօթանալու:

- 29 Եւսեբիոս Եմեսացի. *Մեկնությունը*, Վենետիկ, 1980, էջ 81: Այս գործը Աստուածաշնչի լատագոյն է՝ իր տեսակի մէջ ուրոյն մեկնութիւն է՝ ընտրովի հատուածների մեկնություն: Գործը հայերէն է թարգմանուել 5-րդ դարի առաջին կէսին, այսինքն՝ դասական (ոսկեդարեան) թարգմանութիւն է:

ՀԱՅՈՑ ՏԱՌԱՋԵԻԵՐԸ ՏԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ՝ ՏԵՍԱԿԷՏԻՑ

Ուրբէն Յակոբեան (Թարումեան)

*Նստիստով է հայոց գրի Մշտչրոցեան յարեկոխական
1600-ամեակին*

Գիրը մարդու խօսքը երկրաչափական նշանների միջոցով ամրակայելու եւ տարածելու եղանակ է: Այն, որպէս տեղեկոյթի պահման եւ տարածման համակարգ, ենթադրում է տեղեկոյթի ստեղծող (գրող, հաղորդիչ) եւ տեղեկոյթի սպառող (ընթերցող, ընդունիչ), որոնք օգտուում են որոշակի կողային համակարգից՝ այբուբենից: Հաղորդակցուողները շահագրգռուած են չխախտել գրանշանների ձեւերը (կողը), այլապէս դրանք անճանաչելի, այսինքն՝ ոչ պիտանի կը դառնան:

Սակայն իր բնոյթով գիրը ենթակայ է աղաւաղումների, քանի որ գրանշաններն իրագործելիս դրանց ձեւը դժուար է վերահսկել: Իսկ որքան աւելի արագ է գրելու ընթացքը, այնքան աւելի շատ են սխալները, յատկապէս՝ անձնական առօրէական գրութիւններ կատարելիս: Գրի այս տեսակն ընդունուած է անուանել կենցաղային գիր: Հակառակ դրան՝ երբ գրանշանների տարրերը ոչ թէ գրուում են այլ՝ ակարում, տառերի ձեւերը հնարաւոր է դառնում պատկերել այնպէս, որ դրանք առաւելագոյն չափով համապատասխանեն տառի հանրաճանաչ կերպարին: Գրի այս տեսակն ընդունուած է անուանել կոթողային գիր: Սա գրի հիմնական, պաշտօնական տեսակն է, որը կիրառուում է տուեալ գրի (լեզուի) կրողների զգալի զանգուածներին ուղղուած կարեւոր գրութիւններ իրագործելիս²:

Գրի կոթողային իրագործումը հէնց այն օղակներից է, որոնք պաշտպանում են գրանշանների ձեւը տարաբնոյթ աղաւա-

ղումներից: Դրանցից է նաեւ ազգային գրչական դպրոցը, ուր դասաւանդուում են գրանշանների իրագործման եղանակները (վայելչագրութիւնը)՝ պաշտօնական, կոթողային գրի օրինակներով: Պատկերացնելու համար, թէ որքան արդիւնաւէտ է գործում տառաձեւերի պաշտպանման համակարգը, բաւական է համեմատել, օրինակ, ներկայիս լատինական գլխատառերի ձեւերը Տրայանոսի սեան Բ դարի արձանագրութեան տառաձեւերի կամ ներկայիս հայոց գլխատառերի ձեւերը Եղվարդի եկեղեցու Ձ. դարի արձանագրութեան տառաձեւերի հետ. նոյնիսկ հազարամեակների ընթացքում տառաձեւերը կարող են մնալ անփոփոխ:

Բայց կայ մի ուշագրաւ երեւոյթ. քանի որ իւրաքանչիւր հաղորդակցուող շահագրգռուած է ապահովել գրանշանների ընթեռնելիութիւնը, շատերը փորձում են հաղորդել իրենց գրածին առաւել հանդիսաւոր (կոթողային) տեսք. իրենց ձեռագրին բնորոշ որոշ կոր գծերը ուղղուում են, մեծ կորութիւն ունեցող հատուածները փոխարինում են անկիւններով, անկանոն կորերը՝ կարկինային կորերով եւ այլն: Տեղի է ունենում կենցաղային տառաձեւերի (աւելի ճիշտ՝ տառաձեւերի մասին կենցաղային, անձնական պատկերացումների) կոթողայնացում: Գրանշանի կոթողային ձեւի հետ կապ չունեցող յաւելեալ մասնիկները առանձին անհատներ մեկնաբանում են իւրովի՝ վերաիմաստաւորելով դրանք: Ապա նրանք ներառում են իրենց վերաիմաստաւորած մասնիկները իրենց կողմից իրագործուող կոթողային բնոյթի գրու-